

ՅԱՒԵԼՈՒՄ ՝ „ԱՐԱՐԱՏԻ“ ՄԱՅԻՍ 1905 թ.

ՔԱՐՈՉ ԽՈԼԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Հրամանաւ S. S. Մկրտչի Վեհական Կաթողիկոսի

Digitized by srujanika@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Տապան Մայք Արուսոյ Սրբոյ Էջմիածնի

1905

Сборник стихов

Литературный отдел ГИИА

Дозволено цензурою 19 мая 1905 г. г. Тифлисъ.

Сборник стихов

Литературный отдел ГИИА

2001

Библиотека

Տպագրում է ազգիս Վեհ. Հայրապետի հրամանաւ, պարտադիր կացուցանելով թուրք քահաներին եւ ինդրելով զրագէտ դասակարգին՝ կարդալ եւ բացառել հայ զիւղացուն վերահաս շարիքը եւ նորա դէմ մաքառելու միջոցներ:

Դիւանակես Վեհ. Հայրապետի Խորին վարդապետ.

12 May 1905 J.

ՔԱՐՈՉ ԽՈԼԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Պէտք է կարդացուի եկեղեցիներում, քարոզի ձեւով կիրակի օրերը, հրապարակներում, աներում եւ ամեն տեղ, ուր ժողովուրդ է հաւաքում, կարդացողը պիտի տեղական բարբառի վերածի, Մեր տուածը միմիայն մի նմուշ է. բահանաները գարդապիտները եւ բանիմաց անմինը, որոնք կարդալու են, կարող են աւելի պարզել մտքերը, բացատրել մուտք տեղերն օրինակներով ու հասկանալի ձեւերով, Կարդալուց յետոյ պիտի բաժանուի բժշկ. ընկ. «Համառօտ խրատներ խոլերայից պաշտպանուելու համար» Թերթիկները, Յանկալի է այս քարոզը եւ թէ Թերթիկը Թարգմանուեն տեղական բարբառ-

Ամառը մօտենում է և նրա հետ էլ դուցէ դալիս է
այն սարսափելի ցաւը, որը խոլերա են կոչում։

Ո՞վ չգիտէ թէ ինչ է խոլերան։ Նրա հենց անունը զարդանդ է գցում մեր սրտերը։ Սա մի ահռելի գաղան է, մի աներևոյթ վիշապ, որը լափում է մարդկանց, գերանդու նման հնձում է ու հնձում, խլում է որդուն մօր գրկեց, տապալում է հօրը, որը թողնելով ընտանիքը, անխնայ կոտորում է մեծերին ու փոքրերին, կանանց ու

տղամարդկանց։ Ամեն տեղ մահ է տարածում այս անոռ-
դորմ ճիւազը, երկիրը լցնում է լացով ու արտասուքով։

Մեզնից շատերը երկու խոլերա են տեսել։ Մէկն
երեաց 1892 թւականին, միւսը հէնց անցեալ տարի։
Տասներկու տարի առաջ երեացող խոլերան աւերեց Բաւ-
գուն ու Երևանը, մտաւ շատ քաղաքներ ու գեղեր ու
հնձեց անխնայ տաս հաղարներով մարդիկ։ Անցեալ տար-
ւանն աւելի թեթև անցաւ, բայց էլի բաւականին զոհեր
տարաւ։ Ասեմ ինչքան են հաշւում մեռնողների թիւը
1892-ին, Պարսկաստանում, Խուսաստանում և ուրիշ
երկրներում։ Ասեմ չէր հաւատա,-340 հաղար հիւանդա-
ցել է, 160 հաղար մեռել։

Ահա թէ ի՞նչ սարսափելի ցաւ է խոլերան։ Զէք վա-
խենում, որ այս տարի էլ այդ ցաւը նորից դլուխ բար-
ձրացնի։ Ի՞նչ կլինի այն ժամանակ մեր գրութիւնը։ Ի-
հարկէ, ամենքս էլ վախենում ենք։ Հիմի մի բան հարցնեմ
ձեզ։ Ի՞նչ ենք անում, երբ մի բանից երկիւղ ունենք։
Օրինակ, գիտենք, որ գիւղում մի գայլ կամ կատաղած
շուն է երեացել։ Ի՞նչ պիտի անենք։ Զէ որ պիտի փախ-
չենք-մեր տունը մտնենք ու գեռ դուռն էլ փակենք։ Բայց
այդ վախկոտները կանեն, իսկ քաջ մարդիկ մի հրացան
կվերցնեն ու կերթան-կսպանեն այդ կատաղած շանը կամ
գայլին, որ գիւղին չվնասի։

Բայց մենք այդպէս չենք անում, երբ խոլերայի նման
մի գաղան է վրա տալիս ու մեզ կոտորում։ Մենք ձեռ-
ներս ծալած «Աստծու յոյսով» ենք մնում։

Ի՞նչի ենք այդպէս անում։ Որովհետեւ կարծում ենք,
թէ խոլերան Ասծու պատիմն է։ Կատաղած գայլն Աս-
տծու պատիմ չենք համարում ու գնում ենք սպանում,
որ մեզ չկծի, իսկ խոլերան, որը գայլից էլ վնասակար է,
Աստծու պատիմ ենք համարում ու ոչինչ չենք անում, որ
կուենք նրա հետ։

Բայց, չէ որ մեզք էք անում, կարծելով, թէ Աստուած է զրկում մեզ ամեն տեսակ ցառում ու անբախտութիւն։ Զէ որ խոլերան չի ջոկում արդարն ու մեղաւորը, — նա կոտորում է խեղճերին էլ անմեղներին էլ, մանր երեխաներին էլ։ Զէ, Աստուած չի զրկում խոլերան։ Եթէ դու գնաս քեղ դցես ջուրը, հօ չես ասի թէ Աստուած ջուրը ստեղծել է, որ մարդիկ գնան մէջը խեղդուեն։ Աշխարում հաղար տեսակ լաւ ու վատ բաներ կան, մենք պէտք է զգուշանանք վատից, մնասակարից։ Մի օրինակ բերեմ Մենք ամենքո էլ հողագործ ենք, գիտենք, որ ցորենի մէջ այնպիսի հատեր են բուսնում, որոնք թռւնաւորում են մարդի։ Միթէ պիտի առենք, որ Աստուած մեզ պատժելու, մեզ թռւնաւորելու համար է ցորեն ստեղծել։

Պիտի թողնէք այդ սխալ կարծիքը։ Աշխարս լիքն է վտանգներով ու հրաշալիքներով, մեզ խելք ու բանականութիւն է տուած, որ ջոկենք մնասակարն օգտակարից և մնասակար բաներից հեռու պահենք մեզ, պաշպանուենք նրանցից, ինչպէս պաշտպանուում ենք ցրտից տուն շինելով ու շոր հագնելով, ինչպէս պաշտպանուում ենք թռւնաւորուելոց ծուռ-խոտեր չուտելով, կամ կատաղած դայլից ու աւաղակից, թշնամուց, որը մեզ սպանել է ուզում և այլն։ Խոլերան էլ մի թշնամի է, որը մեզ ուզում է կոտորել և մեր խելքն առում է, որ մենք պարտաւոր ենք պաշտպանել մեր անձը ու մեր երեխաներին նրա ճանակերից։

Հիմի դուք ինձ կհարցնէք.

— Ի՞նչպէս պաշտպանենք մեզ այդ թշնամուց, որին չենք տեսնում։ Կատաղած շանն ու գայլին տեսնում ենք, գողին-աւաղակին տեսնում ենք, բայց խոլերան որտեղ է, ինչ դիտենք, էլ ի՞նչպէս գնանք-կուենք նրա հետ։

— Հենց ցաւն էլ նրա մէջն է, որ չենք տեսնում այդ-

թշնամուն, և նա իսկի տեսանելի բան էլ չէ, բայց էլի կարող ենք պաշտպանուել և փրկել մեզ:

Ահա ասեմ ի՞նչպէս:

Ամենից առաջ դուք պէտք է լաւ հասկանաք և լաւ համոզուէք, որ խոլերան մի կալչողական, վարակիչ հիւանդութիւն է: Ի՞նչ ասել է կալչողական, վարակիչ: Կալչողական հիւանդութիւն ասում են այնպիսի ցաւին, որը մէկից միւսին է անցնում: Ամենքդ գիտէք, որ այդպիսի հիւանդութիւններ մի քանիսը կան: Օրինակ ծաղիկը, բկացաւը, կարմրուկը: Գիտէք որ, երբ մի տան մէջ երեսաներից մէկը կարմրուկ կամ բկացաւ կամ ծաղիկ է ունենում, տան միւս երեսաներն էլ հիւանդանում են: Նոյն ձեռվ հիւանդից փոխւում է առողջին, սրան էլ հիւանդացնում, յետոյ այդ նոր հիւանդացածը մի ուրիշին է հիւանդացնում և այսպէս ցաւը տարածւում է տնից տուն, ու ամբողջ գիւղը շուտով վարակւում է, այսինքն: Կալչում այդ ցաւով Բայց լաւ իմացէք, որ խոլերան ամեն հիւանդութիւններից աւելի վարակիչ զօրութիւն ունի: Այդ նշանակում է, որ այդ ցաւը շատ հեշտութիւնով է փոխւում հիւանդից ուրիշներին:

Ահա մէկը խոլերա է ստացել ու հիւանդ պառկած է: Տեսնում ես, որ այդ տան մէջ ուրիշն էլ հիւանդացաւ, յետոյ մի երրորդը: Դրացիներից մէկը գալիս է հիւանդատես և իր տունը դառնում, մէկ էլ տեսար, սա էլ հիւանդացաւ, ու խոլերան սրա տունն էլ ընկաւ:

— Ի՞նչ պատահեց, ինչի հիւանդացան այս մարդիկ, այն ի՞նչ բան է, որը հիւանդի միջից դուրս եկաւ ու մտաւ այդ առողջների մէջ ու նրանց էլ հիւանդացրեց:

Ահա թէ ինչ պիտի լաւ հասկանաք: Հիմի բացաւրեմ ձեզ:

Ամեն հիւանդութեան պատճառը մի թոյն է: Շատ տեսակ թոյներ կան, որոնք մտնում են մեր ներսը ու մեզ

հիւանդացնում։ Օրինակ, ամենքդ գիտէք, որ կան թուանաւոր խոտեր, ովք ուտի-կհիւանդանայ։ Գիտէք, որ սպիրտն էլ թոյն է, հաշիչն էլ թոյն է, մկնդեղն էլ թոյն է, օպիւումն էլ թոյն է։

Խոլերան էլ մի տեսակ թուանաւորում է։ Ո՞վ խոլերա է ստացել, նշանակում է, որ թուանաւորուած է։

Բայց պէտք է իմանաք, որ խոլերայի թոյնը հասարակ թոյների նման չէ։

Սա կենդանի քոյն է։

Այդ նշանակում է, որ այդ թոյնն, ընկնելով մեր ներսն անում է, շատանում։ Ենչպէս որ մի հատ ճանճ կամ մի հատ լու աճում է ու հազարաւոր ճանճեր ու լուեր է դառնում, այնպէս էլ խոլերայի թոյնը բազմանում է։ Այդ է պատճառը, որ նա կենդանի թոյն է կոչւում։

Հիմի երևակայեցէք, որ դուք մի խոլերահիւանդի ձեռ տւիք. այդ հիւանդի ձեռի վրա այդ թոյնից մի չնչին մասնիկ (որ մենք չենք կարող աչքով տեսնել), կպչում է ձեր ձեռին, դուք էլ առանց լաւ մաքրելու ձեր ձեռը հաց էք ուտում, հացի հետ էլ այդ թոյնի մասնիկն ենք կուլ տալիս ի՞նչ կպատահի։ Այն որ թոյնը, ընկնելով ձեր ստամոքսը, կաճի կբազմանայ, ու ստամոքսից կլցուի ձեր արեան մէջ, ու մի քանի ժամւայ մէջ մէկը բիւր կդառնայ ու ձեզ կիսեղդի-կթունաւորի։

Այդ թոյնն է հիւանդին խեղդողը. սպանողը։ Հիւանդի մարմինը լիքն է այդ թոյնով։ Հիւանդի փոխածի ու դուրս գնացածի մէջ անթիւ անհամար է նա։ Գիտնականները քննել են հիւանդների փոխածն ու դուրս գնացածը ու տեսել են, որ հէնց այդտեղ է թոյնի բունը։ Հիմի լաւ մտածէք ու կհասկանաք, թէ որքան վտանգաւոր են խոլերա հիւանդից դուրս եկած ախտոտութիւնները։ Եթէ նրա կղկղանքը (դուրս գնացածը) թափուի, օրինակ, անկողնու վրա և մէկն այդ անկողնու վրա նստի

կամ ձեռ տա, չէ որ այդ թոյնից նրան կկպչի, կամ եթէ յատակի, կամ աթոռի վրա ընկած լինի չէ որ էլի այդ յատակի ու աթոռի վրա նստողին կկպչի, և այլն և այլն։ Ամեն տեղ կարող է թափուել հիւանդի փոխածն ու կղկղանքը և ամեն բան կարող է վարակուել, և ով այդ բաների հետ գործ ունենայ, ի հարկէ, կհիւանդանայ։

Վերցնենք մի ուրիշ օրինակ էլ.

Դուք հիւանդի լուծածը կամ փոխածը տանում էք թափում ձեր տան դէմի առուն, չէ որ այդ ջրի մէջ թոյնն էլ կաճի-կշատանայ և այդ ջրից խողը կթունաւորուի, կամ եթէ այդպիսի կեղտոտած (վարակուած) ջրի մէջ մէկն իր շապիկը լւանայ ու հազնի, չէ որ այդ շապիկի թոյնը կկպչի ու հազնողին կվարակիւ կամ դուք տանում էք հիւանդի լուծածն ու փոխածը թափում գետնին, ձեր բակը կամ ձեր տան առաջ։ Զէ որ թոյնը կմնայ գետնին, էլի կաճի-կբազմանայ։ Կամ խոլերա հիւանդի շորերը ու տեղաշորերը, հիւանդի մահից յետոյ, ուրիշն է գործ ածում, չէ որ նա էլ կհիւանդանայ, քանի որ գրանց վրա խոլերայի թոյնը մնացած է։ Էլ չեմ ուղղում երկարացնել։ Ուղղում էի հասկացնել ձեղ, որ թոյնը հիւանդից գուրս եկած աղտոտութիւնների մէջն է և դրանց միջով է տարածւում։

Ուրեմն վտանգը նիւանդի արտաքումների մէջն է։ Եթէ նրա դուրս գնացածն ու փոխածն առանձին ամանների մէջ հաւաքուի ու գուրս տարուի-գետնի մէջ թաղուի, թոյնն էլ հետը կմեռնի և ուրիշներին չի վարակիւ։ Հիւանդի հետ նստել խօսելը ոչինչ վնաս չի բերի մարդի, միայն թէ հիւանդը շատ մաքուր պահուի, նրա կեղտոտածը ոլոր իրերը գուրս տարուեն սենեակից ու մաքրուեն։ Մի խօսքով, խօլերան օդի միջով չի անցնում, ինչպէս օրինակ ծաղիկը, հարինքը, կարմրուկը և այլն։

Հիմի ասենք, թէ մէկը ձեռ է տուել հիւանդի կեղ-

տոտած մի բանի, ուրեմն այդ մարդը կորած է, նա անսպատճառ պիտի հիւանդանայ:

Բոլորովին ոչ Բանն այն է, որ շատ էլ մեր ձեռների վրա խոլերայի թոյն է ընկել, շատ էլ մեր շորերը կեղտոտուած են, — այդ դեռ ոչինչ: Մենք այն ժամանակ միշտ այն կհիւանդանանք, երբ այդ ձեռներով առանց լւացուելու հաց ուտենք: Անպահառ պէտք է, որ այդ քոյնը մեր ստամբսն ընկնի, որ նիւթեանամբ: Եթէ մենք մեր ձեռները լաւ մաքրենք, եթէ մեր շորերը լաւ լւանանք, թոյնը վրաներիցս հանենք, առողջ կմնանք:

Այս բանը լաւ պիտի հասկանանք: Մենք կարող ենք հիւանդին խնամել, նրա մօտ նստել, բայց սենեակից դուրս գալիս պիտի մեզ լաւ մաքրենք, — մեր ձեռները, մեր երեսը, ու շորներս էլ փոխենք:

Եթէ այդպէս չանէին բժիշկները, ֆելդշերները և առհասարակ հիւանդին խնամողները, հօ ամենքը կկոտորուեին, ինչպէս կոտորում են միւս վարակիչ հիւանդութիւններից, որոնք օդի միջով էլ են անցնում, օրինակ հարինքը, բծաւոր տիֆը և երեխաների հիւանդութիւնները (քութէշը, բկացաւը, կարմրուկը, ծաղիկը): Ամենքն էլ գիտէք, որ խոլերա հիւանդին խնամողներն անպատճառ ամենքն էլ չեն հիւանդանում: Այդ բանը տեսնելով շատերը կարծում են, թէ խոլերան կալչողական-վարակիչ հիւանդութիւն չէ: Բայց դա սխալ է, նա սաստիկ վարակիչ է, միայն օդի միջով չի կարելի վարակուել: Այդ պիտի հասկանաք:

Մենք ասեցինք, որ եթէ դուք ձեր ձեռներն ու հաշդուստը և այլն լաւ լւանաք, չեք հիւանդանայ, բայց հասարակ ջրով լւացւելը ու շորեր լւանալը չի մաքրում թոյնից, չի հեռացնում թոյնը: Պէտք է դեղերով լւանալ:

Կան դեղեր, որոնք սպանում են թոյնը: Այդ դեղերի մասին ես կկարգամ առանձին յետոյ, իսկ հիմի կասեմ,

որ ձեր ձեռները, վարակուած շորերը, ու հիւանդի հազգուստը, սպիտակեղէնը և ամեն բան պիտի այդ գեղաշըերով լւանալ, որ թոյնը սպանուի։ Մի լաւ միջոց էլ կայ, — այդ եռցնելն է։ Շորեղէնը, սպիտակեղէնը և այն կցցէք պղնձի մէջ, վրան ջուր կլցնէք սապոնի, սօդայի հետ ու լաւ կը եռցնէք մի ժամ, երկու ժամ. յետոյ կչու բացնէք արևի կամ թոնրի մէջ։

Այդ բոլորը մէկ մէկ գրուած է թերթի մէջ, որ կը կարդամ ու կրաժանեմ ձեզ, որ տանէք ձեր տները։

Ինչպէս տեսնում էք, խոլերայից փրկուելու համար հարկաւոր է մաքրութիւն։ Եթէ ձեր տունն ու տեղը ձեր գիւղը ու ձեր անձը մաքուր չէք պահի, խոլերայի թոյնը կաճի անդադար ու ամեն տեղ կլցնի և հիւանդութիւնը կտարածի եթէ ձեր տունը կեղտոտ է, ի հարկէ, ձեր ու տելիքն էլ, ձեր ջուրն էլ վարակուած կլինի և այդ ուտեղն ուտողն ու այդ ջուրը խմողն էլ կվարակուի-կհիւանդանայ։

Ուրեմն մաքրութիւնը պէսք է։ — Մաքրութիւն ձեր անձի, ձեր հագուստի, ձեր ձեռների, Մաքուր պիտի լինի ձեր ուտեղիքն ու խմելիքը, ձեր աման-չամանը լաւ իմացէք, որ խոլերայի թոյնը կեղտ է սիրում, կեղտոտ տեղերումն է աճում, կեղտի մէջ է զարգանում, իսկ մաքուր գիւղը, մաքուր տունը չի կարող նա մտնել և մաքուր մարդին դիպչել։

Գիւղացիներդ պիտի հաւաքուէք, մաքրէք ձեր փողոցները, մաքրէք ձեր տները. ոչ մի տեղ կեղտ մի թռղէք, ամեն կեղտոտութիւն առաւօտները հաւաքէք, լցրէք քթոցների, արկղների մէջ, դրէք մի սայլի վրա ու դուրս տարէք դիւղից դուրս. մի փոսի մէջ թաղէք, վրան էլ հաստ շերտ հող լցրէք։

Տների մէջ մեծ մաքրութիւն է հարկաւոր։ Կահ-կարասիք, քունջ ու պուճախ, փալաս տեղաշոր պիտի մաքուր

պահուեն, ամեն օր սրբուին, լւացուին, մաքրուին, կենացանիների կեղտերը, թրիքը պիտի խսկոյն հաւաքել, դուրս տանել գիւղից հեռու և էլի թազել գետնի մէջ։

Մէկէլ պիտի լաւ հետևէք, իմանաք, հծ հարկանքաղաքում ու գիւղում խոլերա չկա: Եթէ կայ, պիտի կրկնապատկէք ձեր զգուշութիւնները: Այդ գիւղի հետյարաբերութիւնները պիտի կտրէք, չդնաք-գաք, եթէ ստիպողական գործ չունէք, այնտեղից եկող մարդկանցից էլ զգոյշ եղէք: Ի հարկէ եթէ եկողն առողջ է, ոչինչ չունի, կարող էք հետը նստել խօսել, ձեր գործերը վերջացնել, բայց ձեր անկողնի մէջ մի քնեցրէք նրան, իսկ եթէ քնի էլ, նրա գնալուց յետոյ, նրա նստած տեղը մաքրէք, լւացէք եռման ջրով, իսկ անկողինը, որի մէջ քնել է, նոյնապէս գցէք ջրի մէջ ու եփ տուէք, նրա գործ ածած ամանները, գրազը, նոյնպէս: Որքան էլ դժւար է ճիշտ կատարել ասածներս, այնուամենայնիւ պէտք է աշխատէք կատարել, որքան հնարաւոր է։

Յետոյ լաւ իմացէք, որ վարակուած գիւղից ու տելեղէն ու խմելեղէն վերցնելը վտանգաւոր բան է: Մինչև անգամ եթէ ձեր խմած ջուրը (օր, առուն կամ գետը) վարակուած գիւղի միջով է անցնում, դուք այդ ջուրը պիտի հում հում չը խմէք, այլ անպատճառ եփ տուէք, ոառեցրէք ու այնպէս զործ ածէք: Ինչի, որովհետեւ այդ ջրի մէջ կարող է խոլերայի թոյն գտնուել, և եթէ հում խմէք, այդ թոյնը կուլ կտաք ու կհիւանգանաք, բայց եթէ ջուրը լաւ եռցնէք, թոյնը կոչնանայ ու կարող էք անվտանգ գործ ածել: Եթէ լաւ մաքուր աղբիւր կայ գիւղից դուրս, կարող էք նրա ջուրը առանց եփ տալու էլ գործածել, նոյնպէս պէտք է եռցնէք և կաթը: Մի խօսքով հում բան ոչ ուտէք, ոչ խմէք:

Նոյնպէս կաթի հետ պիտի վարուէք, եթէ ձեր կովից չէ, այլ վարակուած գիւղից ու քաղաքից է գալիս.—

նոյնպէս լաւ եփ տուեք։ Միրդն ևս վտանգաւոր է, որովհետեւ վրան կարող է թոյն նստած (ճանճեր) լինել ու մրգի հետ մտնել ձեր ստամփոր։ Շատ մրգեր կարելի է եփած դորժածել, օրինակ, խնձորը, տանձը, սալորը, սերկիթը, եփած միրդը համ անվտանգ է, համ էլ հեշտ է մարսում, իսկ խաղողը չի կարելի, ուրեմն խաղող չուտել, ոչ կարելի է, միայն հարկաւոր է նրան լաւ լւանալ գեղերով ինչպէս ցոյց է արուած թերթիկի վրա։

Քանի որ խօսում եմ ուտելիքի ու խմելիքի մասին, պիտի առեմ և այն, որ շատերը զուռվ են իրանց հիւանդացնում, արբելով, ազահութիւն անելով։ Պէտք է հիմիկւանից թողնէք արագ, դինին, չափաւոր ուտէք, վընասակար բաներ դործ չածէք։ Քէֆերի ժամանակ չէ լաւ խմացէք, որ խմիչքներն ու քէֆերը մեր ստամփոր փչացնում են, իսկ երբ մարտզութիւնը վատ է, հիւանդանալը հեշտ է դառնում։ Առհասարակ սնունդը լաւ ու կանոնաւոր պիտի լինի։ Ունեսրներն աղքատների մասին հոգան, նրանց կերակրեն, նրանց բնակարանները և առհասարակ կենցաղը բարուքեն։ Եւ այդ պէտք է անեն, ոկապէս զի այդ խեղճերը չը հիւանդանան, թէ չէ նրանք եթէ հիւանդանան, ունեսրներն էլ չեն աղատուի, կվարակուեն։ Առանձին ուշադրութիւն պիտի դարձնէք արտաքնօցների վրա։ Շատ տներում դիւզերում արտաքնօց չկայ, և մարդիկ փողոցները կեզտոտում են։ Դա չափազանց վտանգաւոր բան է։ Պիտի հորեր փորէք։

Սրտաքնոցներն ախտահանելու (այսինքն մաքրելու) համար պէտք է օրը մի քանի անգամ վրան կիր կամ կրի կաթ լցնել։

Ամեն գիւղում պիտի չհանգցրած (անչէջ) կրի պահես ունենաֆ։ Կիր ամեն տեղ կայ, և ամենից ձեռնոտու ախտահանիչ միջոցն է։ Կիր կարող էք ածել ձեր յատակի վրա, եթէ հիւանդի արտաթօրութիւններ են թափել,

կարող էք կրակաթ շինել ու շաղ տալ ամեն տեղ, որտեղ
կասկածում էք թէ խոլերայի թոյն է ընկած:

Սիրելի ժողովուրդ. Երբ ժողովրդի գլուխն մի ցասում
է գալիս, նա չպիտի խնայի իր կոպէկներն իրան փրկելու
համար: Այս պատճառով էլ գիւղացիք պիտի աշխատեն
մի ֆելդշեր ունենալ իրանց գիւղում հէնց հիմիկուց.
Փելդշերը, ի հարկէ, բժիշկ չէ, բայց էլի նա հասկանում
է թէ ինչպէս պէտք է պաշտպանուել խոլերայից և հի-
ւանդներին էլ կօգնի, մէկէլ էժան է, — ամսական մի 50
րուբլիով կարելի է մի ֆելդշեր պահել: Եթէ մի քանի
հարկան գիւղեր հաւաքուեն, կարող են մի բժիշկ էլ պա-
հել: Եկէք մեր գրացի գիւղերի հետ խօսենք ու այդ բանը
դլուխ բերենք: Ունեսո՞ները թող միքիչ շատ տան, աղ-
քատները քիչ կամ ոչինչ: Ունեսո՞ները պիտի հասկանան,
որ պիտի օգնեն իրանց խեղճ համագիւղացիներին, և
այդպիսով արգելեն, որ խոլերան չը տարածուի գիւղում:
Թէ չէ, եթէ աղքատները հիւանդանան, իրանք էլ չեն
պլոծնի:

Ով իր գիւղի մասին է հոգում, իր մասին է հոգում:

Բացի ասածներս, պէտք է գիւղում մի փոքրիկ դե-
ղատուն էլ ունենաք:

Դեղատունը պիտի կազմի բժիշկը: Թող մէկը գնայ
քաղաք ու բժշկին խնդրի (կամ գիւղական բժշկի), «որ
այդ դեղերը գրի գեղատնից առնելու համար» կամ գիւ-
ղական բուժարանից բժիշկը պէտք է առանձին գրի նաև
մանրամասն, թէ ինչպէս և երբ պիտի գործածել այդ
դեղերը, կը բերէք գիւղը, քահանան կամ վարժապետը
կկարդայ ու ձեզ կհասկացնի: Այդ դեղերի անունն էլ այս
թերթի մէջ կան:

Յետոյ պիտի զգուշանաք զանազան պառաւներից ու
գրբացներից ու մօլաներից: Նրանք չեն հասկանում հի-
ւանդութիւնը և ի հարկէ չեն էլ հասկանայ, թէ ինչպէս է

հարկաւոր բժշկուել։ Շատ դեղեր են աալիս նրանք, բայց ոչ մէկն օգուտ չէ, այլ վնաս է։ Ասում են սխտորը պահապահում է մարդուն խոլերայից, բայց իմացէք, որ ընդհակառակը շատ վնաս է։

Միևնոյն ժամանակ պէտք է լոէք բժիշկների տուածխորհրդներին, որոնք ինչ ասում են ձեր օգտի համար են ասում։

Այս միւս թերթիկի մէջ դուք կդանէք շատ ուրիշ խրատներ, ուրեմն կարդացէք ուշադրութեամբ ու հետեւցէք։

Հիմի դուք հասկացաք, թէ ինչ է խոլերա կոչուած գաղանը, երբ որ մենք ճանաչում ենք թշնամուն, կարող ենք և պաշտպանուել նրանից։ Զեզնից է կախուած ձեր փրկութիւնը, լաւ միտներդ պահէք ինչ որ առացի ու խոլերան չի մտնի մեր դիւղը, իսկ եթէ մտնի էլ—շատ վնաս չի տայ։

Ամեն չարիքի գէմ պիտի կռւել, խոլերան էլ մի չարիք է։

Ուրեմն հաւաքենիք մեր ուժերը, միանանք, իրար օդնենք, որ կարողանանք լաւ կռւել ու յաղթել։

Գ-ր Ա., Արծրունի.